

Ս Ե Կ Ո Ւ

Ա Մ Ա Ա Գ Ի Ռ

Ա Զ Գ Ե Յ Ե , Բ Ե Լ Ո Ւ Յ Ե , Գ Ր Ե Վ Տ Տ Ե Յ  
Ե Ւ Ք Ե Վ Ե Յ Ե

Ա Թ Ե Զ , Ի Ւ Տ Ե Ր Ե

Յ Ե Ր Ա Ւ Յ Ե Դ Ո

Ե Տ Պ Ա Ր Ա Ն Ա Տ Ա Ր Ա Ն Ա Տ

1866





# ԱՄՍԱԳԻՐ

ԵԶԴԱՅԻՆ ԲՈՒԺՈՒՐԻԿԵՐ ԵՎ ԳՐԵԳՐԻՏԵՐ

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ . ԹԻՖ 2 .

ՀԵՂԱՆ ՄԻԱՄԵԱՅ

ՓԵՊՐՈՒԱՐ 1866

129-54

## ԲԵՆՑՈՒՐԻԿԵՐ

ԱՀԱՅՆԵՐՈՒՆ ՀԱՅԱՀՐ ՅԴՐԱՎՃ ՆԱԽ :

Օդը պարզ, երկինքն անամպ ու զուարթ օր մի էր, միջներկրական ծռ վուն մէկ խորշին մէջ, յերկինց թէ յանդնդախոր յատակէ՛ ծովու, հակառակ հով մի մասնաւ որապէս յարձաւ կելով՝ վերու վար կը յուղէր ալիքները որոյ վերայ կար նաւ մի, և իւր մէջտեղէն ատեն ատեն դէպ ի եր կինքն բարձրացած սեւ մուխէն կ'երեւար թէ շոգենաւ էր, Ո՞էջը եղող մարդոցմէ խառն ձայներ կը լսու էր, բայց շոգենաւը առանց ճամբայ ելնելու՝ ալիքներուն վերայ միայն կը տատանէր երբեմն աջ և երբեմն ձախ դին. մուխը երբեմն կը դադրէր, և երբեմն կը ծխէր :

Եյս նաւուն համար շատեր կ'ը-

սէին թէ հասարակ նաւ էր, և թէ իւր հնութիւնը մինչև Նոյեան թոռն ները կ'ելնէ, կան ոմանք ալ որ կ'ըսեն թէ Նոյեան տապանի յետին մնացարդներէն շինուած է, երբ ջրհեղեղէն եաքը քամիին սասակութենէն Վասսեաց գագաթէն խլելով՝ Ունարայ դաշտին մէջ ձգեց ու ցրուեց զայն, որոյ մնացարդացը մէկ մասէն անմիջապէս կառուցաւեցաւ այս նաւը :

Իւր դիւցաղնական հնութիւնը ինչ որ ալ ըլլայ, սա յայսնի է որ, յիշեալ նաւը անցիշատակ դարերէ ի վեր ովկիանոսներու վերայ մէծամեծ նաւամարտութեանց մէջ մտած է, շատ յաղթութիւններ ըրեր ու քիչ անդամ յաղթուեր է : Քանի որ ուշիւնքն ձարտար նաւապեաններ ու նեցած է, յաղթապանծ փառօք միշտ

պատկած է իւր ճակատը : Իւր երեւելի նաւապեաներն փոխուելուն, որ դլասւորաբար չորս անդամ եղած է, չորս անդամ ալ նաւուն կառավարութիւնը յեղափոխուած է : Վերջին անդամ մեծապէս վիասուեցաւ այս նաւս Պաղետինու ու Եգիպտոսի ջօւրերը բարբարոս ծովասպատակներէ, կորսունցուց իւր նաւապեար և իւր պատերազմական դրօշակը : Յետ այնորիկ որքան ալ Եւրոպիոյ, նա մանաւանդ Պաղցիոյ նաւարաններուն մէջ մնաց նորոգութեան համար, այսու ամենայնիւ անհնարին եղաւ իւր առջի պայծառութիւնը վերստին ստանալ և իւր յափշտակուած ու բրդգուած դրօշակը նորոգել : Եւ այս վերջին խեղճ վիճակիս մէջ մնաց երկար ժամանակ . շատ ալէկոծութիւններու պատահեցաւ . շատ ալիքներ գլխէն անցան, շատ ժողուերու ու խութերու զարնուեցաւ : Բայց աներեւոյթ ձեռք մի կարծեսթէ իւր վերայ հսկելով՝ կը պահպանէր զինքը ընդդէմ ալէտանջ կոհակներու և մըրկածին օդերու :

Յէպէտ և առանց նաւապեարի մը նաց այս նաւը, սակայն նաւատուաց մէջէն գտնուեցան Ճարտար մարդիկներ, որոնք բաւական երկար ժամանակ կառավարեցին նաւը . և որովհետեւ պատերազմի մէջ ալ մտնելու ալ երես չունէր, միջերկրական ծովուն եզերքները մինչեւ Պոսփորինեղոցը և անկէ եւս անցնելով դէպի Եւքսինեան ծոցը կը նաւարէր անվոնաս հզօր պաշտպանութեան մի ներքեւ, որ շատ անդամ զինքը ծովասպատակաց ձեռքէ ալ աղատած էր : Այսոյդ իւր առջի փառքն ու նշանը կորսունցուցած և աշխարհիս պատերազմական նաւուց ընդհանուր ցուցակին մէջէն իւր անունը չնշուած

էր, բայց և այնպէս իւր մէջ գըտնուած առաջին կարգի պաշտօնակալնաւորդաց յատուկ ջանքովին ու իւրնամբովը գոնէ վաճառականութիւնընելու սկսած և ըստ կարի առեւտրական նաւու մի յարգն ու վարկը սկսած էր ձեռք բերել : Քիչ քիչ իւր ծովախորշէն դուրս ենելով Եփառայ վերայօր նաւարկելով ու Պարսից ծոցէն անցնելով մինչեւ ի Հնդկաց աշխարհնը և մինչեւ հին Ամեգունեանց երկրին սահմանները սկըսեր էր Հերթական և իւր վաճառական նութիւնը ընդարձակել . Գանդէսկան հարստութեամբ իւր գոգը ընցնել, և իւր սրբազն խորանը, որ երկրորդ գլխաւոր պատերազմէ մի յաղթութեամբ ենելէ ետքը կառուցած էր, և գրեթէ ամէն ալէ կոծութեանց և փոթորիկներու մէջ նա էր զինքը պահպանողը, սկսաւ փայլել Հնդկային ոսկով և Ակլանի մարգարտով : Եցն ժամանակին սկըսած էր միանդամայն նաւորդել յագրիական ծով, ի Պաղցիոյ և ի Հոլանդա . և մօտ ժամանակներս մինչեւ Պոլսմզոսի և Վեսպուկիոսի նոր աշխարհնը հետազոտելու ելած էր : Վնձանօթ մնացած էր իրմէ մի միայն Վլստրալիան, որ իւր համբաւաւոր ուկեցն առատութեամբը շատ երեւելի նաւատէրներ ու նաւապեաններ իրեն ձգած, և շատ բաղդախնդիր ու ճակատագրի ետեւէ ինկնող ընչափազց մարդիկներ իրեն քաշած, շատերն հարստացուցած ու իսխատ շատերն ալ թերեւս ունեցածէն ալ զրկած էր :

Այսպէս ուրեմն մէր հիմակուան ալիքներուն հաճոյիցը թող տրուած խեղճ նաւը մինչեւ մօտ տարիններս իւր առագաստներուն զօրութեամբն ու զեկավարներուն փորձական գի-

տութեան ուժովը եթէ ոչ պատեշազմական՝ գէթ իւր բնական կազմութեան շնորհիւը առաջին կարգի առեւտրական նուերու հետ մրցելու կարող էր . և օտարազգիք անգամ անոր թէ՛ գլխաւոր և թէ հասարակ նաւորդաց և պաշտօնակալաց հուտատրմութիւնն ու անխարդախս ընթացքը տեսնելով, իրենց յարդն ու վարկմանը և գրեթէ իրենց հարստութեան ու գայիցը աւանդապահ ըրած էին :

Այս կէս մի խեղճ և կէս մի յաջողութեան երես բւնող վիճակի մէջ էր մեր ալէկոծեալ նաւը, երբ նաւական արհեստին մէջ մեծ ու անակնունելի յեղափոխութիւն մի ծագեցաւ . գէպքն ու գիպուածը շոգիին ծածուկ զօրութիւնը յայտնեց, և մարդկացին բնակոն հանձարը անոր աջակցելով, յղոցան ու ծնան այնպիսի զաւակ մի, որ սկսաւ մեծ վասահութեամբ տիրել ծովու ալիքներուն և արհամարհել անոր մարդակուլ և նաւակուլ սպառնալիքները : Հետ այնորիկ սկսան նաւերը ծովուն երեսը իրը լոյնածաւալ և անսահման գաշտերու վերայ նժոյգներու նման սրարշաւ վագել, ալիքները խոնարհեցան անոր մոգուկան զօրութեամկը, Եւոզան<sup>1</sup> իւր բոլոր սասակութեամբը հազիւ կարաց համարձակել անոր գէմ գնելու, և անոր փրփրածին ոտիցը ներքեւ արգելքներ հանել: Տեսան ազգերն ու զարմացան, ուամիկը տեսածին վերայ իսկ գիտունը բնութեան գաղտնեացը վերայ: Վաւատէրեն ու վաճառականք, որոնք մինչեւ ցայնժամը լսու

հին գրութեան առագաստով կը բանեցնէին իրենց նաւերը, ալեաց ու հողմոյն գերի էին, և անոնցմէ կախեալ էր իրենց բաղդն ու ապագայն, և թերեւս ճամբայ ելնելուն հազարումէկ նուէրներ և գուցէ մինչեւ անդամ իրենց միակ զաւակը կը խստանային Պիսիդոնին՝ զոհելու, թէ որ խաղաղութեամբ հասցընելու ըլլար իրենց նաւը գէպի ի նպատակը . յետ այնորիկ թողաւցին շատերն իրենց նախկին դրութիւնն և սկրդրունքը, և սկսան նոր գրութեամբ վարուիլ, ընդունելով արդի նոր ըսկը գրունքը, և իրենց նաւերուն խաւարչուտ ու նսեմ խօրշերը լուսաւորեցին բնական ( հանքային ) նոր լուսով: Ծատերը, որոնց նաւը հիմնական կազմութեան կողմանէ հաստատուն էր, և արդի նաւային վիճակը կը ներէր, յաջողեցան իրենց ձեռնարկութեանը մէջ . սկսան նաւերնին սրբնթաց արշաւել և մէկ ժամուն մէջ տասներկու մղոն տեղքայիլ: Վշաբահագրական աստիճաններն ու երկրիս կլիմանները իրենց համար մանկական խաղալիկ մի եղաւ՝ ելեւէջ ընելով սուզման միջոցի մէջ, տարին իրենց համար ամիս էր, և ամիսն օր մի, և օրը ժամ մի . այսպէս մէկէն ի մէկ կարծես թէ դիւթեական զօրութիւն մի զգեցան, որոնք մեր պառաւներուն առասպելներուն մէջ կը տեսնենք, և կամ ալղարումէկ գիշերներ ըսուած Վրաբացի պատմութեանց մէջ կը կարդամք:

Այս նաւական վիճակին զարմանալի փոփոխութիւնը տեսնելով մեր

<sup>1</sup> Եւոզանը ըստ գիտաբանից՝ Արամազդաց որդին էր և վերակացու հազնց, և Սիկիլիոց հիւսիսակաղըն եղած Եւոզան կղղներուն մէջ կիշերու

1 Պիսիդոն՝ որ լսուն լեզուով հեպտոն ալ կը կոչուի երբեմն, կռունափ որդին և Արամազդաց եղայը կը համարուէր, և կիշեր ծովու վերայ:

ալէ կոծեալ նաւուն նաւաստիները ,  
փորձ փորձեցին իրենց նաւուն մէջ  
ալ ընդունելու սոյն նոր սկզբունքը .  
և առանց դիտելու նաւուն բնական  
կազմութեան վիճակն ու հանգա-  
մանքները , ու զելով մէկ ժամու մէջ  
մէկ ամսուան տեղ քայլել , քակեցին  
նաւին խորշերն ու զետեղեցին հոն  
երկրթէ անարդիլ ու հսկայածեւ մէ-  
քենաներն , զօր Յւրոսպայի երեւելի  
գործարաններուն մէջ ձուլուած էին :  
Նաւը մէկէն ի մէկ շարժում մի ա-  
ռաւ մեքենաներուն սաստիկ ցնյու-  
մէն , և նաւաստիք ուրախութեանէ  
սկսան ծափ զարնել և նաւակատեաց  
տօն կատարել , կարծելով թէ այն  
շարժումը շոդիին ուժէն էր : Այս  
տեսնելով նաւուն գլխաւոր պաշտօ-  
նակալներն , որոնց ձեռքն էր մինչեւ  
ցայնժամ անոր զեկն ու կառավա-  
րութիւնը , թողուցին իրենց պաշ-  
տօններն ու ետ քաջուեցան նաւուն  
մէկ կողմը , և սկսան իրենց սիկարը  
քաշել անհոգութեամբ , թէպէտ և  
իրենց պարտաւորութիւնն այն չէր :  
Նաւը այն ցնյումէն յետոյ յանկարծ  
դադրեցաւ , և թէպէտ նոյն նաւաս-  
տեաց մէջ կային նաւական ուսում-  
նարանէ ենող երիտասարդներ , ո-  
րոնք ձեռքերնին առած նաւուղղու-  
թեան վերաբերեալ գիրքերն ու հր-  
բահանգները , կ'աշխատէին այն ան-  
խօս ու անհոգի գործիքներով նաւը  
քայլեցընել , և մէկ երկու օրուան  
մէջ ՈՒջերկրական ծովուն երեսէն  
ատլանտեան ու խաղաղական ովկիտ-  
նոսներուն անծիր ու անծայր ընդար-  
ձակ տարածութեան վերայ միւս նա-  
ւերուն հետ մրցելու ենել , տեսան  
զիրենք անկարողութեան մէջ : Հայց  
երբէք չհամոզուեցան և կամ հա-  
մոզուիլ չէին ուղեր , թէ գիտութիւ-  
ու արուեստ մի առանց փորձառու-

թեան անդօր և անպիտան գիրեր են ,  
որքան մեծ աստիճանի ալ ըլլոյ ա-  
նոնց յարգն ու վարկումը : Այս ան-  
ակնունելի անյաջողութենէն իրար-  
անցում մի ինկաւ նաւաստեաց մէջ ,  
կարծիքներն սկսան մէկմէ կու ընդ-  
հարկանիլ . մէկը այս ինչ , միւսը այն  
ինչ պատճառը մէջ կը բերէր նաւուն  
անշարժութեանը : Աւ թէպէտ շատ  
կարծիքներու մէջ իրարու անհամա-  
միտ էին մեր դպրոցականները , սա-  
կայն ամէնքը միաբան ընդունած էին  
թէ առանց առաջնէն փորձառու-  
թիւն ունենալու նաւուղղութեան  
տրհեստին մէջ , լոկ տեսական գիտու-  
թեամբ և հմտութեամբ կարելի չէ  
նաւը քայլեցընել և իւր նարատակին  
հասցընել անվիսա :

ՈՒջ բերուած պատճառներուն  
մէջ գլխաւորներն էին մէկ մի կար-  
ծեաց տարազուգութիւնը , երկրորդ՝  
շոդիին պակասութիւնը , և ասոր ալ  
պատճառ էր անշուշտ նիւթին պա-  
կասութիւնը : Աչ նիւթը կամ ա-  
ծուխն ինքնին առանց շոդիի , և ոչ  
շոդիին գարձեալ առանց համամտու-  
թեան կարծեաց կրնայ շարժիլ և  
ուղղելնաւը գէպի ի իւր փափագած  
նպատակը : Իսկ գլխաւոր պաշտօնա-  
կալք նաւին , որոնք սիրտն ի խոց հրա-  
ժարած էին , ոչ կարծիք կը յայտնէ-  
ին և ոչ իրենց փորձառու հմտու-  
թիւնը կը չնորհէին իրրու գործակից  
դպրոցական նաւաստեաց ճգանցը ,  
գիտնալով որ այն հմտութիւնները հին  
գլխոյ արդիւնք է , որոնք՝ ինչպէս կը-  
կարծէին դպրոցականք , իրենց տեսա-  
կան և մեթոտական գիտութեանց  
հետ բոլորովին հակունեաց էին :  
Յուղմունքն երթալով կը սաստկա-  
նայր նաւուն մէջ , որ բաւական ժա-  
մանակ ալ նաւագնացութենէն և  
առեւտրական շահատակութիւննե-

բէ դադրած ըլլալով, իւր ներբին հարսաւութիւնն և դրամագլուխն ալ սպառած և կամ սպառելու վերայ էր, Այն միջոցներն էր, հինաւուրց ծերաւնին մէկը, դլուխը քափուշնն անցուցած ձմեռուան սաստկութեան պատճառաւ, քաշուեր էր նաւուն մէկ առանձին խորչը, ու անոր ներկոյ վիճակին վերայօք ինքն ալ իւր խորհրդոցը մէջ կը յուղէր ու կը ծփէր, և իւր փրկաբեր խրատներն ու հրահանգները չէր համարձակեր հազօրդելու նաւուն մերձակայա ալէկոծութիւնը ազատելու միջոցներուն վերայ, վասն զի կը տեսնէր ակն յանդիման՝ որ ժամանակ ժամանակ նաւաստիներուն ձեռքը սեւ ու ձերմակ թերթերը կը պարտին, ու կարդացողը մէկ մի այս դին և մէկ մի այն դին բարկութեամբ կը վազէ, և ասով աւելի կը զօրանայր յուզմունքը, և կարծես թէ ալիքներն ալ զայն տեսնելով կը սկսէին իրենք ալ փրփրալ և չորս դիէն նաւուն մէջ հոսելու ձիգընել. Տեսաւ ծերունին սեւազգեստ ու սիրտը չհանդարտեց, և որովհետեւ իւր նուազ ու կերկերեալ ձայնը չէր հասներ անսնց ականջը, առաւ ձեռքը եղէցն ու մագազաթեայ թերթ մի, զոր իւր քովը գըտնուած հին ձեռագրի մը մէջէն խլեց, ու սկսաւ գրել աւելի դառն արտսունիքներով քան թէ մելանաւ՝ յետագայ տողերը. “ Որդիք ժողովը դեան իմց, կը տեսնեմ զձեղ յեզր հասեալ մօտալուտ վասնգի. բացէք զաշ մօաց ձեր և տեսէք կորուստը նաւուդ, որոյ մէջ կը գտնուիք դուք և բովանդակ ժողովուրդ մի : ” Դուք որ այս նաւուն փրկութեանը և նոր դրութիւն մի անոր աւելի շարժում մի տալու կը փափագէք, գովելի է ձեր այդ փափագը. բայց աւելի գովութե

արժանի կ'ըլլայ՝ թէ որ գիտութեան հետ մէկանը յարդէք փորձառութիւնն ալ. Կատարեալ գպրոց որ և է ուսմանց և արուեստից՝ փորձն է, որ շատ անգամ գերազանցած է քան զիսյն իսկ գիտութիւնն ալ, որ նոր գարուս հողին է, ամենահարկաւոր է նոյն իսկ փորձառութեան մէջ ալ. և գարձեալ, որովհետեւ ձեր նաւը նոր մեթոսով մի քայլեցընելու համար՝ շգինն ուժը դուք ալ ընտրած էք, ապառ ըեմն ձեր գովելի նպատակին հասնելու համար, թէպէտ և ձեր ընդունած գըտառ հրահանգներուն կանոնաց հակառակ ըլլայ, թողուցէք նաւին կառավարութիւնը այն երիտասարդաց ձեռք, որոնք ունին թէ հայրենական փորձառութիւն, թէ գիտութիւն և թէ առաւել եւս մեքենաներուն շարժում տուող նիւթ, որ ձեր իսկ մէջէն ոմանց կարծեաց համեմատ՝ նաւին շարժմանն և սրնաթաց քայլելուն սկզբնական պատճառընքն է: Փորձառութիւն, գիտութիւն, և նիւթ, երեք յատկութիւն ըստ իսպառանց որոյ չեն կրնար որ և է շոգենաւեր անվտանգ հասնելու իրենց նպատակին : Ընդունեցէք իմ այս փրկաբեր խորհուրդս, գեթ քիչ մի ժամանակի համար, մինչեւ որ նաւդ գոնէ իւր առջի հասարակ ընթացքը դանէ, և արդի նաւաստեաց մէջ յառաջանան փորձառու անձինք, որոնք ոչ թէ մասնաւոր օգտի համար աշխատին ընդունած նոր սկզբունքնին յառաջ քայլեցնել, այլ ընդհանուրին շահուն և պատուայն համարուն յարանիկ իրատները տուղելով հինաւուրց ծերունին մագաղաթին վերայ, ու գալարելով զայն թողուց նաւուն տեսարանին վերայ, և հարաւային արեւելեան հովը փը-

չելք գլորեց տարաւ զայն և ձգեց  
նաւաստեաց խումբին մէջ : Ասկայն  
յայտնի չէ տակաւին , թէ ինչ աղ-  
դեցութիւն ըրաւ ծերունիին իմաս-  
տուն խօսքերը անոնց ոգւցն ու-  
սրափն վերայ :

### Աշաբ Բարյակինութիւն :

(Տես Երես 9.)

Այն խնդրոյս , որովհետեւ առ այ-  
ժըմ մեր ազգին նկատմամբ այնչոփ  
կարեւորութիւն մի չունի , բայց  
կրնայ ըլլոց ժամանակ մի , որ մի որ  
խիստ հեռու չէ , այնպիսի խնդիրներ  
յուզուին , եթէ իրօք արդէն սկը  
սեալ չեն , վասն որոյ մեք արդէն կա-  
րեւորութիւն տալով սոյն խնդրոյս ,  
շարունակեմք երկրորդել մէջ բերե-  
լով երկու տարակարծիք գիտնակա-  
նաց գասուն առարկութիւնները , ո-  
րոնք կրնան միանդամայն օրինակ լի-  
նել մերազգի բանասիրաց՝ իմաստուն  
և օրինաւոր վիճաբանութեան :

Այս լուսագիրը ուզելով պատ-  
մութեամբ մի հաստատել իւր կար-  
ծիքը , մէջ կը բերէ գաղղիական աշ-  
խարհիկ գպրոցի մի պարգեւաբաշ-  
խութեան հանդիսի ժամանակ աշա-  
կերտի մի տուած պատասխանը : Յի-  
շեալ պատանին , կ'ըսէ , որ ազատ խոր-  
հող անձի մի զաւակ էր , աստիճանին  
վերայ ելաւ , որ իւր մէկ տարուան  
միջոցին մէջ գրած գասերուն օրի-  
նաւորութեանը համար բարոյական  
և կրօնական ուսմանց վերաբերեալ  
ընծայագիրքն ու պասկը ընդունի :  
Իայց գիտնալ պէտք է նախ , որ ըստ  
պատմութեան Այս լուզան ամենե-  
ւին կրօնի մի չէր հետեւէր իւր հօրը  
նման , ոչ ըստ հռոմէական և ոչ ըստ

բողըքուկան ծիսից մկրտեալ էր . և ոչ  
թըլփատեալ էր ըստ Հրէից : Ա ան-  
որոյ երբ դպրոցի կառավարիչն իւր  
աջ կողմը նստալ հռոմէական քահա-  
նացին ուզեց տալ գիրքն ու պատկը ,  
որ իւր ձեռաօքը պատկէ զպատա-  
նին , նա չճանչնալով զինքը՝ բողքա-  
կան եղած պիտի ըլլոց ըստոց . բայց  
երբ վերանորոգեալ եկեղեցւոյ պաշ-  
տոնեացն ալ , որ կառավարչին ձախ  
կողմը նստած էր , չճանչցաւ զաշա-  
կերտը , այն ատեն դէպի ի տղան դառ-  
նալով կառավարիչը , Խրայէլացի՞ ես  
ուրեմն դուն , հարցուց անոր : — Ոչ ,  
Տէր , պատասխանեց տղոյն : — Եւ մի՛  
սորմէցուց քեզ բարդական ու սման-  
քը : — Իմ հայրս , պատասխանեց :  
— Այդէկ ուրեմն , ազտու , իմ կողմէս  
սիրալիր բարեւներ ընես հօրդ , ըստոց ,  
ու նիքն իւր ձեռաօքը պատկէց զնու :

Այս պարզ ու ազայական բնու-  
րանքը մէջ բերելով սու կը հետեւցը-  
նէ Այէսլը , թէ մարդս առանց որ ե-  
է կրօնի կրնայ ըու ոյտկանութիւն  
ստանալ . Ասկայն առանց պատասխա-  
նեց չմոզուց զինքը կը երական խում-  
քը , ու միճարանութիւն մի է բայց  
ուեցու , ինչպէս ըսինք , երկու տա-  
րազցդ վարդապետութեանց մէջ :

“Ասոնց գիտաւորութիւնն է , կ'ը-  
սէ ուրիշ բարեկալու գրագէտ մի ,  
հաստատել թէ բարոյականութիւնն  
ինքնագոյ է , մարդոյս իշխանական  
միաքը կամ իմացականութիւնն է ա-  
նորսահման ու պատուէրներ տուողը ,  
և թէ ամենեւին մէկ կերպով մի գե-  
րազանց աստիճանի վարդապետական  
օրէնքի մի հետ կապակցութիւն չու-  
նի . միով բանիւ ազատ բառ մի է  
Խարոյականութիւն ըստնիս : Որմէ  
ազտու , ինչ բանէ ազտու : Ասոր վե-  
րայ բան մի չեն յայտներ . այլ այս է  
միայն ըստնին , թէ Աստուծոյ գա-

զափարը՝ պարտուց գաղափարին հետ յարաբերութիւն չունի. և թէ մարդը լըս ինցնին առանձին կարող է թէ իւր անձին և թէ այլոց դէմ ունեցած իւր պարտուրութիւնները մը տաքը ճանչնալ և իրաւունք տալ անոնց կամ ոչ. այսպէսով մարդս բարյականութեան ստեղծողը կը կացուցուցի, որ ըսել է առաւածացը նել զմարդը. վասն զի իմացականութեան և կենաց օրէնքներուն գերագոյն հեղինակն ընել ըսել է զանիկաց :

“ Այս բանս իրօք և անարբերաբ ըստ ըստղներ ալ կան, որոնք խորհերու այնքան շատ վարժուած մարդիկներ չեն. կան ալ որ գիտնական և իմաստասիրական եղանակաւ մի բած են զայն, ինքը զինքնին խորունկ փիլի սփայի տեղ գնող մարդոց պէս. բայց թէ տասնք և թէ անոնք փուռ մարդ զիկ են, և առաւել առաջինները՝ որոնք աւելի ծանրախոհ ու անկեզ անձնաց տեղ զրած են զիրենք, և ամենէն ամբարտուաններն են :

“ Բայց ինչ որ ալ ըլլայ, ասոնք ի քենց միոցն ու ըսածնին կը հասկընան արդեք : Եթէ Պարցական ըստ բառերնին սայդ նշանակութիւն մի ունի, ի հարիէ մարդոց իրարու մէջ փօխադարձ յարաբերութեանց դաշտափար մի կը պարունակէ զօրութիւր մէջը, և այս գաղափարը որն է, և ուսկէ կուգայ, և որն է անոր պարտուորիչ նշանը :

“ Այն աշուկերաբ որ ոչ Հրեայ է կրօնիւ, ոչ բաղբական և ոչ հուօմեական, ինչպէս այս տեսակ ուսմունքով պիտի ընթանայ իւր կենացը մէջ, առանց գիտնալու իշխանական մտաց զօրութեամբը՝ թէ իւր հօրը սորվեցուցած պարտուորութիւնները պէտք է անիկաց սիրէ, և ոչ միայն սիրէ, այլ և ի գործ պիտի դնէ,

թէ և անոնք իւր անձին, իւր ցանկութիւններուն, կրիցն և զուարձութեանց բնական միտումներուն և իւր հաճոյքը կատարելու համար ունեցած սասափիկ բնազդեցութեան զէմ եղած ըլլան :

“ Ես չեմ գանգատիր որ այսպիսի ուսմունքը կրթուած տղայ մի կապավորչին ձեռօքը պսակուեցու ու վորձատրուեցաւ, բայց սա կ'լում, որ Եթէ ժամանակէ մի յետոց առաքենութիւն մի գործելու ստիպող պարտուց դէմ տարակցոյ մի ծագելու ըլլայ յանկարծ իւր մարդին մէջ, իւր հօրը սորվեցուցած բարյատկանը, թէ և ըստ ինքեան կատարեալ եւս եղած ըլլայ, բաւական պիտի ըլլայ անիկաց, իւր տարակուութեանը դէմ զայն (առաքինութիւնը) հաստատ բռնել տալու. Վար ինչ կ'լուէ փիլիսոփայն : Եւ նոյն ինքը փիլիսոփայն կրնայ համարձակիլ ըսել թէ այսպիսի փորձերու ժամանակ, զորոնք անշուշտ ճանչըցած է ինքը, և եթէ ուրանաց իրեն և այլոց դէմ ստուծ կ'ըլլայ, այսպիսի փորձերու ժամանակ կրնայ համարձակիլ ըսել թէ ինքը աւելի զօրաւոր է քան զիւր միւռումը, քան զցանկութիւր, քան ըզ վայրաբարչ կիրքերն ու քան զւարի և մոլութեան հրապարները : Եւ ոչպահանակն ուսուցանող վարժապետք եւս ինչ պիտի ըսեն ասոր : Ես իւրենցմէ տրամարանութիւն չեմ պահանջեր, Այլ անկեղծութիւն կը ինզրեմ :

“ Տրամարանութեան հարցընելու ըլլամք, անոր ամենմեկէրնուս ըսածը սա է, թէ Աստուծոյ գաղափարովը չփաւերացեալ ու չհաստատուած բարյական մի կազմելը, պարտուորութիւնները պէտք է անիկաց սիրէ, առանց հաստատելու զանոնք հեղինակու-

թեամբ և իշխանութեամբ, որ մարդոցս կամքը կը պարտաւորէ :

“ Ձեր ըսած բարոյականը ընտիրն եղած պիտի ըլլաց, և ատոր ամենեւ ւին տարակոյս չլաց, վոսն զի հակառակ ձեր սկեպտիկեան գոռողութեանը, այն ընտիր ու ազնիւ բարոյականը կրօնական ընկերութեան մի կը պարտաւորիք, որ զձեզ ի խանձարոց սնոց ու մեծցոց : Իսցց եթէ սցն ընկերութենէն և զանիկայ կաղմող օրէնքներէն զատելու ըլլաք, ինչ կը մնայ ձեզ . Եթէ ոչ լոկ առական վարդապետութիւն մի :

“ Աւ յետոյ այս տեսական վարդապետութենէ յառաջադադայող պարտաւորութիւնները բացատրելու դինչ կանոն պիտի բռնէք : Ես այս պարտաւորութիւնները ձեզմէ տարբեր եղանակաւ կը հասկընամ : Իմ դատումն ձեզ ենթարկելու համար փիլմովայական կերպ մի ունիք արդեօք . ես ձերն ինձ ենթարկելու և յաղթահարելու համար չունիմ բընաւ կերպ մի, և չեմ ալ պնդեր այդ պիտի իշխանութիւն մի ունենալ . կը ճանչամ միայն որ ձեր միաքը և իմասնկախ են իրարմէ . թող ուրեմն իւրենք իրենց իրաւընտիրն ըլլան, բայց այն ժամանակ վճիռ տուողն որ իշխանութիւնը պիտի ըլլաց : — Իշխանութիւն պէտք չէ, պիտի ըսես : — Ի՞նչպէս, ձեր և իմ բարոյականս իրարմէ զանազան ըլլան, և իրաւընտիր իշխանութիւն մի չգտնուի վըճիռ տալու, թէ իմ բարոյականս արդեօք անպիտան է, թէ ձերը անմիտ է : Եւ դուք այս վիճակը բնուն իմաստափրական կը կոչէք : Իսւն անիշխանական վիճակ մի է, ոչ միայն դաշտաբարաց, այլև գործոց նկատմամբ : Վասն զի, ինչպէս որ մեր խօսքը հոս բարոյականին վերայ է, այսինքն կեն-

ցաղավարութեն, ուստի խիստ յայտնի է որ այս կենցաղավարութեան ընթացքը եթէ ներքին կանոն մի չունենայ՝ քան գդաղափարը զոր իւրաքանչիւր ոք պիտի ունենայ իւր պարտաւորութեանցը վերայ, յայն ժամ մարդայս կեանքը պիտի մատնըւի ամէն առասկ զուարձութեանց, հեշտութեան, նախանձու, միուլ բանիւ ամէն կրից, որոնք պիտի աշխատցնեն ու փճացընեն զայն :

“ Կըսէք թէ ընդհանուր բարոյական մի կոյ կրօնաներէ անկախ . — Կորելի է կրօնաներէ, բայց ոչ երբէք կը բօնէ : Որովհեաեւ զանազան են կը բօնքները, գուցէ կը կարծէք թէ չի կայ կրօն մի, ըսել կ'ուզեմ հիմնականապէս ճշմարիտ կրօն մի . որոյ առջեւ թէ աւելորդապաշտութիւնները, թէ մոլորութիւններն են թէ իմաստակութիւնները ամօթապարտ յաղթահարութին :

“ Ի՞նաբաննիս կրօնքներու վերայ ճառելչէ, այլ անկէ սա հետեւութիւնը ստանալ, թէ կոյ բարոյական մի, որ իւր յատուկ բնութեամբը իրաւունք ունի ազատ մարդայն վերայ հրամացելու :

“ Բայց տեսնենք թէ ընդհանուր բարոյական ըստնին ի՞նչ է . ուրիշըն չէ եթէ ոչ ճիշտ այն բարոյականն է, որ Վատուծոյ գաղափարէն ծագելով, սոյն սկզբունքէս կ'ընդունի խղճի վերայ իշխելու և անոր պարտաւորութիւններ թէլաղբելու իրաւունքը :

“ Այս ընդհանուր բարոյականը իւր բնութեամբն համաձայն է մարդկանց հասարակ մտացն ու անոնց պիտոյիցը . և ով չդիմուեր զայս . բայց այս համաձայնութիւնը մարդկային կամքը կանոնաւորելու և զանիկայ օրինաց ենթարկելու իրաւունքը ինքնին

չկացուցաներ, Հրաման ըստածնիս՝ հրարամայող իշխանութիւն մի իւր մէջը զօրութեամբ կը պարունակէ, առանց որոյ անձնիշխանութեան հակառակ եղած բռնութիւն մի յայտնելէն զատուրիշքան չնշանակէր այն : Տես անգամ մի, թէ ներկայ դարս խանդորող մոլորութեանց վերայ երբ տրամաբանելու ըլլամբ, մեր տրամախոս հութեան ծայրը ուր կ'երթայ միշտ կը հասնի, ընկերութեան վերաբերեալ տեսականութեանց<sup>1</sup> : Կը տեսնեմք որ բռնութիւնն է միշտ, բռնիսկ բռնութիւնը որ այս աղատութեան դարուս դիմացը կեցած է՝ իբր գերագոյն իմացականութիւն ու հաստատիչ կարգաց : Այս տեսականութեան մէջ՝ բարոյականը մի միայն դաշնիք մի է, և եթէ լոկ դաշնիք է, բնական է որ հրացանով կամ սրով հաստատել պէտք է զայն : Տէղիւդ<sup>2</sup> որ թրասի այս բանս վաթսունե հինգ տարի առաջ ըստած է օրէնսդիր ժողովքին, թէ Բարոյականը սուրբ Յետիլ հեծելը զըրըն է :

“ Յայտնի կը տեսնուի, որ իմ ըրածս ուրիշքան չէ, եթէ ոչ հակաքրիստոսեան կարծիքներուն ընթացքը ցուցընել, որոնք վեճ տրամաբանութեամբ մի կ'ընդարձակուին և Գաղղիոյ կարգաւորեալ<sup>3</sup> դաստիարակութեան մէջ օրէ որ աւելի մուտք կը գտնեն :

“ Ասիկայ թող առաւել ազդարութիւն մի ըլլայ անոնց՝ որոնք կ'երեւակայեն, թէ ուսում սորվեցընելու խնդիրները քաղաքականին նկատմամբ ամենափոքր բաներ են. ես իմ մասիս կը հաւատամ՝ որ ներկայ ցաւալի ժամանակիս զբաղմունքն եղող

բոլոր ուսմանց մէջ գերազանցն ասիկայ է : Երբ Գաղղիան անաստուած սերունդներ ստանալու ըլլայ, և հարկաւ պիտի ստանայ, որովհետեւ բոլորովին հաւատքէ զանոնք մերկացընելու կը ջանացուի, այն ատեն ապագայն պիտի գիտնայ թէ ինչ կ'ըլլայ եղէր այն ժողովուրդը, որոյ բարյականը կտպակցութիւն չունենար Վատուծոյ հետ, որ հեղինակ է կենաց . և զգուշանանք ամէնքս ալ թէ աշխարհական և թէ կարգաւոր, թէ լոկ քրիստոնեայ և թէ առաջնորդ ու հովիւ, զգուշանանք մեր անտարբերութեամբը գործակից ըլլալու այն դաւակցութեան, որ պաշարած է ըզ Գաղղիան : Բարեպաշտական գործքեր կան Գաղղիոյ մէջ . այո՛, և ոլէ զանոնք չունեսողը : Բայց մէկ գործ մի միայն կը պակսի, այն է ընդհանուր գործակցութեամբ մի գէմ դնել մուլը վարդապետութեան, որ գիրքերով և գպրոցներով կը թունաւորէ հոգիները . այս գործքը կարգաւորացըն է, և գերդաստանի տէրերուն և բոլոր այն անհատներուն՝ որոնք չեն ուզեր որ Գաղղիան երթալով նիւթակրօնութեան՝ մէջ ինկնի, և անկէ ամէն տեսակ անարդ ստրկութիւններու անձնատուր ըլլայ ու :

Ո՞ւ հոգմէական կղերին՝ Գաղղիոյ մէջ կը օնքը ջնջուելուն և անաստուածութիւնը տիրելուն համար կանխաւ ցըցուցած երկիւղը՝ ըստ մեզ չսփազանց է, բայց ոչ առանց խոհեմութեան է իւր նախազգուշութիւնները զոր միամիտ ժողովրդոց կը թելադրէ, սորվեցընելով անոնց այն գողունի ճամբաները՝ ուսկէ սովորեալ են զեղծ մարդիկ սպրդել մանել մարդկային մոաց մէջ և սերմանել

1 Théorie.

2 M. Destutt de Tracy.

3 Systématique.

1 Matérialisme.

Հոն տակաւ իրենց դայթակղեցուցիչ սրովները : Այս գողունի ճամբաներուն մէկն է բարոյականին ազատ ու անկախ ըլլուը պնդել և բաժնել զուիկայ ճշմարիտ կրօնքի հետ ունեցած կապակցութենէն , և թողուլ մի մի այն մարդկային խղճին ու դատմանը ձեռք : Եւ ասկէ սկսեալ տակաւ յառաջ երթալ և մերկացընելով քրիստոնէութեան միակ ճշմարիտ կրօնքը մարդկան բարուցն ու վարուց վերայ ունեցած զօրութենէն ու ազդեցութենէն , քակել անոր հիմնական է ացուցիչ յատկութիւնները , այն է քրիստոնէական կրօնքին աստուածեղէն սկզբնաւորութիւնը և անոր փրկարար զօրութիւնը , որ է իւր վախճանականը :

## ԳՐԱԳՐԱՑՈՒՅՆ

=====

Եսայի Հայութակեալ Կովկաս :

(Տես Երես 6) :

Վորժամանակն եղաւ Վանայի ժողովը զօր Եւրոպ թագաւորի հրամանաւը կազմուեցաւ , Գրիգոր Վանարպեցիին մահուանէն անմիջապէս ետքը . որոյ կարծեացն եւս համամիտ ըլլալով Եւրոպ , ուղեց որ նոր կաթողիկոսի ընտրութեան առմիւնք՝ անոր գրով թողուցած գաւանութեան գիրնալ ընդունել տայ նորընտիր կաթողիկոսին և բոլոր ազգին : Վեր նըստատակն որովհետեւ մի միայն Եսայեայ վարդապետին վերայ է , և ոչ ազգային անցքերուն , վասն որոյ խօսքերնիս ամփոփելով կ'ըսէմք՝ թէ յիշեալ մեծ վարժապետը կարեւոր գերմի ունեցաւ այն ազգային կրօնական խնդրոց մէջ : Արովհետեւ արդէն կը

ճանչնար Գրիգոր Վանարպեցիին հառամասէր սգին , վասն որոյ եւր իւր կենդանութեանը այն նպատակիտ համար ժողով մի ընել ու զելով , մասնաւոր գրով մի ծանոց Եսայի վարդապետին և խնդրեց որ ինքն ալ կայ անձամբ ներկայ գանուի ժողովքին , որուն մեծ կարեւորութիւն ու ազգեցութիւն կրնար տայ իւր ներկոյ ութիւնը , Եսայի ոչ միայն ընդունեց կաթողիկոսին հրաւերը , այլ և նոյն ժամանակէն միտքը դրաւ անոր կարծեացն ու ջանիցը դէմ վինուիլ . ինչպէս և ըրաւ ալ անոր մահուանէն յետոյ 1307 ին եղած ժողովքին դէմ վիճելով , անոր ապօրինաւորութիւնը մէջ բերելով , որ առ առ եւլ աշխարհականաց ժողով էր քան թէ եկեղեցականաց . որովհետեւ թագաւորն և իշխանազունք բռնութեամբ կ'ուղենին ընդունել տալ Գրիգորի Վանարպեցիս Պատանութեան թօւղթը՝ սպառնալով այսպէս . « Ո՞ր սուրբ ժողովցոյ օրինադրութեան ընդդիմանալ զի մի ընդ պատուհասիւք դիցի , և մասն և բաժին ընդ հերետիկոսացն ընկալցի » :

Եսայի վարդապետ լսելով այսպիսի ժողովքի հանդամանքները , ուր փախանակ Քրիստոսի հեզութեանը՝ թագաւորական բռնութիւնը կը տիրեր , ընջան մի տալով իւր հայրենասէր եւրակներուն մէջ եռոցած արեանը , զոր կարծես թէ « Եւրոպեանց՝ այն սրբատան քահանայից արիւնն էր որ կը չնչէր , սկսաւ բանիւ և գրով ընդդիմանալ , զգուշացրնելով զազդը նոյն ժողովքին գաղտնի նպատակներուն դէմ , որ էր բռն իսկ քաղաքականութիւնը Վիլիկիոյ դահլլամին , զոր հաստատ պահելու համար , անխորհրդաբար յանձնառու եղած էին ազգային եկեղեցւոյ ազատ իշխանու-

թիւնը աեսր մատնել, եթէ երբէք պիտի կարենային այս անդարմանելի զոհողութեամբ ալ կանգուն պահել ցարդ ազգային դրօշը . և պատմութիւնը մեզ կը ցուցընէ մեր կարծեաց ձշմարտութիւնը , երբ լսաինասեր լւսավնեան իշխանի մի<sup>1</sup> անպառուղ աշխատութիւնները միաք բերելու ըլլաց Եւրոպից դահլիճներուն քովլ :

Այսպէս ուրեմն իմաստութեամբ գուշակելով Ասոյի , թէ եկեղեցական իշխանութեան մի իւր սեփական ծէսերովը մեկուղ փոխուելովն ալ կարելի չպիտի ըլլաց քաղաքականութիւնը հաստատուն պահել ընդդէմ ժամանակին գէպքերուն բուռն հոսանացը . վասն որց ամենայն զօրութեամբ ախոյան հանդիսացաւ իւր մայրենի եկեղեցւոյ բազմագարեան իրաւասութեանն ու սահմանադրութեանց ընդդէմ օտար եկեղեցւոյ եւ կամուտ վարդուպետութիւններուն :

Հայստանի վարժապետը սոյն եւ կեղեցական յեղափոխութեան մէջ առաւելեւ եւս փայլեցցց իւր գրական հանձարը . իւր գրիչը որ սոյն առթիս մէջ գործածեց , յայտնի կը ցուցընէ զայն : Յաւալին այն է՝ որ այս աստիւ ճանձազգին սիրովը և ազգային եկեղեցւոյ նախանձովը վառուած երեւելի գրագէտ մի հազիւ թէ իւր առնուամբը և եթ արժանի սեպուած է Հայ մատենագրաց կարգին մէջ դասուելու , առանց յիշատակուելու և ոչ իւր գրաւոր երկասիրութիւնները<sup>2</sup> : Մենք առ այժմ անոր գեղեցիկ և վայելու ոճոյն և հայեցի դպրութեանն մէջ ունեցած ընտիր ճաշակին մէկ օրինակ տալու համար , մէկ ճառը

մէջ կը բերեմք հոս , զոր Վահան մաղովքէն երկու տարի ետքը գրածէ , ոյսինքն ի թութին Հայոց 282 (1309) , և մեր ձեռագիրը ուսկէ պիտի հանեմք , գրեթէ յիշեալ մողովքէն քիչ տարի յետոյ գրուած է :

Այրդիք մարդկան մինչեւ յերբ եք խասաթիրաք . ընդէ՞ր սիրէք զնանրութիւն , և ինդրէք զսառութիւն , առէուրեմն յիւրում բանսն երանելին Դաւիթ : Եւ ես զնորայն առքերելով վերածայնեցից յիմումս ժամանակի . Ոինչեւ յերբ սրամտութիւն . մինչեւ յերբ անձնահաճութի . մինչեւ յերբ ակնառութիւն : Ժամէ է և ինձ այժմ զԱրաքելացն բարբառել : — Ինդէր բնաւ հերձուածք են ի ձեզ : — Մի ազգ , մի լեզու . ոմն ես Գաւզոսեան . ոմն ես Հպաւզոսեան . զուր վիճարանութեամբ և ունայն բերմամբ :

ո Վրիսոս է գլուխ արարածոց և փրկիչ աշխարհի . և զիարդ զմի Վրիսոսն ի բազումս բաժանեք . իրեւ զայլակզու և զայլագէմ . ոմն յայս ինչ պարապեալ և ոմն յայն ապարան նորածեւութի և յանիմաստ յածումն . զօրէն կապիի զդայարանց նմանեալ , և ոչ մուաց իմաստից ընտրողաբար փայթ առնել : Մի է Տէր , մի հաւատ՝ ըստ անօթսն ընարութեան . և միոյ Տէառն հաւատոց զիարդ առօրեայ փոփոխումն և սկըզբնաւորութիւն : Հիմն այլ ոք ոչ կարէ զնել քան զեղեալն Հիսուս Վրիսոսու . և այն վաղ ժամանակաւ եւ դաւ : Օ իարդ յամենայն օր հիմնարկութիւն . յամենայն ժամ առաջարկութիւն նորագոյն սկզբմանց : Վազում սկզբմունքն՝ բազում խռովութեանց են պատճառք , և բազում քակման և շփոթման : Վմենայն ազգ

1 Աւելան Զ. իշխան Ալիբեկիոյ :

2 Տես Պատ . Հայերէն գաղութեան , երես 618.

և թագաւորութիւն բաժանեալ աւերի , և ոչ հաստատի , ըստ տէրունական հրամանին : Օք վիճմունք և բաժանմունք խռովութեան է պատճառ և ոչ խաղաղութեան . և խռովութիւնքն աւերման և ոչ շինութեան :

” Աախ՝ զայս հարցանեմ , զի ամենայն իրիք առաջարկութեան դիտաւորութիւն դոյ . և առանց դիտաւորութեան սկզբնաւորութիւն երբէք իմիք ոչ լինի : Ա ասն որոց և զդիտաւորութիւն առաջարկութեան այսորիկ հարցանեմ , զի գիտացից ըզ հարկաւորութիւն իրիս այսորիկ կամ զպիտանութիւն , զի ընդ կարեւորն և ընդ պիտանացուն՝ բազում զանազանութիւն դոյ : Աւ արդ՝ լսեմ , որ պէս ասեն ստայօդ ունայնաբանութիւն , զի սէր և միաբանութիւն ասեն հաստատեսցի , և գայցեն Մակեդովացիք և օդնեսցեն մեզ : Աւազ զուր և ունայն կարծեացո այսոցիկ . զի թէ առանց Աստուծոյ եղեւ և ոչինչ , որպէս և է ձմարիտ , ապա գալ Մակեդովացւոցն՝ ոչ ըստ մերոց լիցի կամաց , և ոչ ըստ նոցայն , այլ ըստ Աստուծոյ : Օք որպէս լրսեմք , նոքա ի վաղ ժամանակաց յամենայն ժամ պատրաստին , ոչ վասն մեր , այդ գալ և ազատել զիրուսաղէմ յանօրինաց , և ոչ յաջողի : Իսկ սէր ընդ մեզ և ընդ նոսա՝ և առանց այսր իրի՝ հայցմամբ սրբոյն հաստատուն է . և նոքա զմեզ բնաւ ոչ բռնադատեն իմերոց սահմանաց փոփոխել . այլ թեթեւամսութեամբ

ի մերայոցս առ նոսա փութան , ըստորհք իմն առնելով խնդրովս : Իսկ նոքա ոչ ի բաց կալն , այդ եւս առաւել ի մերոյն պահելն զմեզ ընդունին . և եպերեն զի բաց կալն ի մերոց սահմանացն իբրեւ զօրինազանց : Իսկ շաղկապ սիրոյ թէ էին այսպիսի իրակերտութիւն , ապա բաց ի սակաւուց ամենայն իրօք Յօյնք և Մակեդովացիք համագործութիւն ունին . և այնքան թշնամութիւն է ի մէջ նոցա , մինչ զմիմեանս ընդ ամպարիչոս համեմատեն :

” Քանիցս անգամ կղայեցին Աերսէս յիւրում ժամանակին և ի թագաւորութեանն Հոռովմոց Մանիլին փոյթ արարին վասն միաբանութեանն այսց և Յունաց , և ոչ եղեւ հնար : Այդ և քեռորդի նորին տէր Վրիգոր , և Վամբրոնցին Աերսէս ի նոյն ջանացին , և ընդունայն և զուր եղեւ աշխատութիւն . և մեր ոչ սրբագոյն և ոչ իմաստնագոյն գոլքան զնոսին : Աւ սուրբն Աերսէս կղայեցին վասն այսր իրի գրեաւլ յարեւելս , ազօթիւք ինդրել Աստուծոյ , զի ըստ համայնքն Աստուծոյ աւարտ իրին լիցի . սրովյայտ իսկ է , թէ ոչ մարդկան հնարինք , այդ Աստուծոյ իրակերտութեամբ յաջողեսցի իրս այս , և ում որ ցաւ է վասն այսր վշտի և թշնամութեանն զուր և անօգուտ վիճման , պարտի աղօթիւք առաջի Աստուծոյ անկանել , և զայլս ի նոյն յորդորել . և երկրամերձ գիմօք և արտօսրաթոր պաղատանօք հաշտեցուցանել զԱստուծած , թերեւս դարձի ի բարկութենէ իւրմէ որ վասն մեղաց մերոց : Օք այլ զինչ է պատառումս այս , քան թէ մեղաց մերոց հարուած և պատուհաս յանցանաց . որով և յայտ իսկ է , թէ չկը

1 Մակեդովացիք ըստին պէտք է լստին կամ փռանեկ ազգերն իմանամբ հոս . և օրովհետեւ ասոնք ցամաքաւ կուգային առաջին անդամները զԱրուաղէմ ազատելու համար , վասն որոց Մակեդոնիային անցնելով՝ նոյն երկրին անտւամբը ձանցուած կերեւին ազգայնոցմէ ոմանց :

1 Մանուէլ Յունաց կայորը :

բժշկութիւն վիրաց մերոց, բայց մի այն աղօթից օժանդակութեամբ և Արտուծոյ ձեռնտուութեամբ : Եւ մեր զօրէն խաղալիկ մանկանց կամ անհմաւ բժշկաց, ի վէրս դվար՝ յստից փութալ բժշկութիւն . և փոխանակ ի կարեւոր գեղս փութալը, ձեմականացն հետեւիմք գտմանց : Այլ ասէ . ի ձշմարիտն ընթանամք կրօնս, յիմաստնոց գիւտու և ի տեսութիւն . : Աւաղ անմտութեանս . յոր ձշմարիտ, կամ յորոց իմաստնոց գիւտ :

“Արդ, բեր ինձ յառաջ զհաւատըն Կիկիական և զառհմանադրութիւն սրբոց հարցն, և հաստատեանափ զիրաց քոց առաջարկութիւն : Վմենայն ումեք յայտ է, զի որ ի ձայն մերձ լինի, նմա յայտ է ձշմարիտն քան որ ի բացեայ կոյ : Եւ թէ այս պէս է, որպէս և է իրաւացի, ապա որք ի նախակարգեալ օրինադիր հարսկն հուպ էին, և յաւանդիչն հաստատութեան հաւատաց, նոցա յաւէտ պարտ է հաւատալ, քան թէ սուտակասպասաց յեսնոց . որք ոչ միայն երկոր ժամանակաւ և հեռի միջոցաւ յեսնեալք են, այլ և վարուց եւս մաքրութեամբ ի նոցին համեմատութենէ վերջացեալ գտանին<sup>1</sup> : Ուր զմեծ և զկարեւոր հոգաբարձութենէ անփոյթ արարեալ, զոչ պիտանիս ջանան հաստատել : Ուր բժշկական արուեստի հմուտք գոլով, ի հաւաքումն ծաղկանց՝ միայն զպիտանին և զօդտակարն ժողովեն, և զիստանն և զանպիտանն ի բաց ընկենուն : Օոր պարտ էր և ոգւոց բժշկացս այսմ փոյթ յանձին ունել, և ոչ ի վայրապար և յանօգուտ

նորաձեւս փութալ, և զպարզամիտոն և զանիմաստան պատրել : Վրդարեւ հովիւք մոլորեցան, և ի սպանութիւն հօտին Վրիսասոի միաբանեցան, և սպանութիւն ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ :

“Եւ արդ, եղից յայսմ վայրի առաջի լսասիրաց սեղան լի հոգեւոր խահիւք՝ զհրալից բանս սրբոց դիտապետին Վրիգորի վկայասիրին :

Այսպէս վերջացընելով իւր խօսքը, մէջ կըբերէ Վ կայասիրի մէկ ճառար, որոյ վերագիրն է այս . “Յաղագըս միաւորութեան և բնութեան և դիմի և անձնաւորութեան ու . և կըսկրաի այս բառ երով . “Վիաւորութիւն է սույզ և ձշմարիտ և համանիւթ մասնաբար որոշելոց, որոց ոչ ինչ տարանիւթ ընդդէմ երեւիս : Այլ այս ճառս բովանդակ Վ կայասիրին չէ . այլ իրբեւ վկայութիւն բերելով անոր մէկ համառօտ հատուածը միայն, ուրիշ աստուածաբաներէն եւս նոյն մոտց համեմատ պարբերութիւններ քաղելով՝ կըսկրոն ինքը դարձեալ շատ վկայութիւններով հաստատել ի Վրիսասո՝ մի բընութիւն յերկուց միաւորեալ, Որով հետեւ Վնաւարզեցւոյն դաւանութեան թղթին մէջ գրած էր բացայստ բառերով խոստովանել ի Վրիսասո երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն :

Մոկէ ի զատ ուրիշ աստուածաբանական դրուածքներ ալ ունի՝ ջըրախառն բաժակաւ պատարագելով ընդդէմ կանոնի ըլլալուն վերայ . և սոյն ճառիս մէջ գեղեցիկ և ազդուոձով կըպատմէ նախ նոյն կրօնական անցքերուն վերայօք, և կը խրկէ զայն նոյն ժողովքը կազմաղներուն :

Ունի դարձեալ ուրիշ խրատական ճառեր իւր ծանօթներուն գը-

<sup>1</sup> Այն է Գրի . Կաթ . Անաւարդեցին և իւր համախնները :

բուած, որոնք խմորեալ էին ունիթուաց ստարուաց վարդապետութիւններով. Վիոլբանիւ՝ բացի չզեկիելի մեկնութենէ ու քարոզներէ, միւս գրուածները գրեթե բոլորն ալ ազգային եկեղեցւոյն պաշտպանութենը համար են, և բոլոր իւր ձիգը թափած է ընդդէմ եկեղեցւոյ հակառակութաց, լսուին վարդապետաց: Իւր գրիշը ոչ միայն օրինակ է գեղեցիկ ոճոյ, այլ և բարեպաշտ սրտի և ազգանէր ոգւոյ, որում ամենայն եկեղեցականք և երեւելի աշխարհ հականք ազգիս պարտին նախանձաւոր և հետեւող բլար:

C. O. T. C. F. W.

վառանդաւորաց դպրոցին համար  
անցեալ օր Եւդոկիայէն սպասարկի մի  
խրկուած էր Գերապատիւ Առաջ-  
նարդին յատուկ յանձնագրավը ։ որ  
կիմացընէր յիշեալ պատահեցն՝ Յու-  
ցակին պայմանացը համեմատ ընու-  
բուած ըլլալը ։ Այսու ամենոցնիւ  
Ամենապատիւ Արքազան Պատրիարքը  
երկու օրէն յետոյ խրկեց զպատաւին  
սուրբ Աթոռոց յարդոյ բժիշկ պա-  
րոն Ա. Տէպէճեանին որ քննէ զինքը  
ըստ օրինի արուեստին ։ Հրամանը  
գործադրուելով՝ յետագայ վկայա-  
գրով կը հաստատէ Պ. բժիշկը տը-  
ղուն առողջութեան գոհացուցիչ վե-  
ճակիր ։

10-PL-7.

Ամենապարհ- Սբ Բայրան Հայութ :

Ըստ հրամանի Զեր բարձր Արքակ  
նութեան և ըստ կանոնի Առաջ Ա-  
թուոյս , Եւդոկիացի Կարապետ ա-  
նուն Ժառանդառաց գպեցի նորեկ

աշակերտին այցելութիւն ընկլով ,  
իւր կազմուածքին բնական նիհարու-  
թենէն , և ձախ ազգրին վերայ ան-  
վեստ պալարէ մը ի զատ , թէ ժա-  
ռանգական և թէ ստացական ախա-  
մը՝ նա եւս ամենեւին բնական պա-  
կառութիւն մը չունենալուն վկայե-  
լով կստորագրեմ .

Q. U-t-w-h-U-S-k-w-h-z-k-w-k:

66 3-148 8

— Առաջին վահանգութեաւուրաց  
առաջ և նախկին գոլրոցի աշակերտաց  
տարեկան բնեութիւնը ըստ սպասու-  
թեան՝ Արքոց Վարդանանց տօնին  
նախընթաց շարթուն ըլլալով, այս  
տարի երկու շաբաթ յառաջ սկսուե-  
ցաւ, այսինքն յունուարի 18-ին, և  
որովհետեւ գեռ լացած չէ, վան-  
որց թէ քննութեանց արդիւնքը և  
թէ Արքոց Վարդանանց աւուր ըլլ-  
ալիք գոլրոցական հանգելով եկու  
ամսուն կը հրատարակեմք :

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Վեցեալ ամսոյ 5 ին, Մեքսիկայի  
կայսեր լիազօր Դեսպան զօրապետ  
Վահագիայը է Հանուրտո Մարդէցը,  
մեկնեցաւ ի Կաստանդինու պոլիս։ Հի-  
շեալ գեսպանը մեկնելէն քանի մի օր  
առաջ փառաւոր խնջոյք մի տաւաւ  
քաղաքիս Նիւպատաներուն, ուր  
հրաւիրեալ էր յատկապէս և Ասեմ։  
Կառավիարիչ Եղիշէթ փաշայն։

— Առաքել Քաղաքիս՝ Ամերիկայի  
միտցեալ նահանգաց Հիւողատօսը  
վեց ամսէն ի վեր է հրաժարած ու  
մեկնած ըլլալով, անոր յաջորդն յու-  
նուար ամսոյ 6 ին հասաւ, որ է Ա իբ-  
A.R.A.R. @

տոր Պէնպու չէր : Յիշեալ հիւպա-  
տուր զինուորական կարգէ ըլլալով ,  
պատերազմի մէջ իւր մէկ սրունքը  
կօրոնցուցած է :

## ԱՅԼԵՒ ԸՑԼՔ

Իտալից մէջ նոր աշնա՞դ :

Վ. Բիստոնէութիւնը ուր որ աւելի ծաղկած ու ազատէ , հան կը աեռնեմք որ մոլորութիւններն ու նորանոր աղանդներն ալ անպակաս են միշտ : Վ. յսպէսէ Ամերիկան և Եւրոպան , զորոնք կրնանք աղանդոց խանձարութք համարել : Ո ասն որոյ և միամիտ բարեպաշտներու և կրօնամոլ անձանց երկիւղն այն ասոմի ճանիէ , որ եթէ մէկը յանկարծ ելնէ և իւր ի աղայութենէ ունեցած մէկ հոմազմանը զէմ հակառակ վարդապետութիւն մի յայտնելու ըլլայ , անմիջապէս իրր նոր աղանդաւոր կը նշառակի : զոր օրինակ եթէ չերժ Հառմէական մի , յանկարծ ելլէ Վ. Պապին աշխարհական իշխանութիւնը մերժելու ըլլայ , աղանդաւոր է պիտի բառուի , և կամ բազգական մի ելնէ բաց ի Վ. Դիրքերէն՝ Եկեղեցւոց տւանդութիւններէն մէկ քանին կամ բոլորն ալ լնդունելու ըլլայ , իւր կրօնակցին առ ջեւ նոր աղանդի մէջ ինչ կած պիտի համարուի :

Վուերս լրագրի մի մէջ կարգացինք որ , Խալալց Անդսնա ու Ջիօրենցա քաղաքներուն մէջ աղատամիտ անձինքներէ յօղովմի կազմուեր ու նոր աղանդ մի հաստատուեր է , և իրենց մոլար վարդապետութեան կէտերն առ երեք բաներն են եղեր , Ա. Պա-

տարագը իտալերէն լեզուով լնել .  
Բ. Հազրորդութիւնը երկու աեսակի ներքեւ մատակարարել , այսինքն հացըն ու զինին մէկտեղ հաղորդեցրնել հաւատացելոց . Գ. Վահանաց ները իրարմէ ձեռնազրութիւն : Բառ մեղ առաջնոր անվիտաս է , երկրորդը հարկաւոր , երրորդը տարակուսելի : Վ ասն զի եթէ զիրար ձեռնազրութքը երկուքն ալ աշխարհական են , չկնար ըլլալ ձեռնազրութիւն . իսկ եթէ մէկը արդէն քահանաց և զաշխարհականը ձեռնազրելու ըլլայ , ալ իւրեն հարկ շմբար փախագարձ ձեռնազրութիւն անկէ ընդունել . ուստի այս երրորդ կէտը կրնայ սիսալ տեղեկութիւն ըլլուլ : Իսկ առաջնոր մոլորութիւն չհամարութիւն , ապա թէ ոչ բաց ի մէկ սրբազն լեզուէ մի աշխարհիս ուրիշ զանազան լեզուով եղած պատարագները ընդունելի եղած շպիտի ըլլան , որովհետեւ աղանդ համարուած են տարբեր լեզուով պատարագելը : Որքան առ երրորդը , զոր աղանդի տեղ գրած են , ընդհակառակը աղանդաւորութենէ ու մոլորութենէ յուզզու փառութիւն գարձած պէտք է համարուի . որովհետեւ բռն իսկ աղանդ մի հակառակ Վ. բիստոսի կացուցմանը մէկ տեսակով և եթ հազրորդելնէ : Վ. յօշտի է ահա Եւրոպից կոյր բարեպաշտ քրիստոնէից ըրած գահավեճ գաստումները և որխալ կարծիքները , որովհ ճշմարտութիւն մի մոլորութեան տեղ կը զնեն :

Խաբողն կէս խաբող մի աւետէք .  
կամ

Ալիւրայի աղակուշ-Ռինը :

Վապահովութեան համար հաստա-  
տուած ընկերութեանց մէջ առաջն

Կը համարին Անդղեացիք . բայց շատ  
անգամ այնպիսի օրինակներ ալ կ'ու-  
տան անոնք ապահովութեան մասին ,  
որ աւելի մարդոց ծազրը կը շարժեն՝  
քան թէ հետեւելու կը յարդորեն  
զմել : Այս օրինակներէս մէկն է հե-  
տեւեալ դէպքը :

Ազնուական Անդղեացիին (Ճենո-  
բլէն) մէկը օր մի Ֆւնիս բառուած  
Ապահովութեան գրատունը կ'երթայ  
կը ներկայանայ , ու կ'առաջարկէ թէ  
երկու հազար սիլոր ունիմ զոր Հայու-  
նոյէն հետաքերած եմ , ու կը ցան  
կամ զանոնք ապահովութեան դնե-  
լու :

— Ոիկարներ . . . զարմանալի՞ բան ,  
կը պատասխանեն գրատան պաշտօն  
եաները : Վերջապէս տեսնենք , կը  
սեն , Բնչէ անոնց արժողութիւնը :

— Աւթուուն լիրա սթեռլին . (8600  
դահեկան) , որու կէոը սիկարաներուն  
արձեքն է , և կէոը մաքսի տուրքը՝ զոր  
հատուցեր եմ , և ահաւասիկ ընկա-  
լագիրը :

Վամիջապէս սպասաւ օր մի կը խոր  
կեն աղօւականին հետ իւր բնակարա-  
նը . կ'երթայ կը տեսնէ թէ սիկարները  
և թէ անոնց լաւ վիճակի մէջ ըլլուը .  
ապահովութեան տուրքը կ'որոշուի ,  
կը վճարուի և մուրհակը (սէնէթը)  
կը յանձնուի կէս ժամուն մէջ :

Չորս ամիս կ'անցնի , Ճէնտըլմէնը  
կը դառնայ ընկերութեան գրատունը :

— Պարոններ , կը սէ , Ճէր ապահով-  
ցուցած երկու հազար սիկարները  
այրեցան , պէտք է օր վճարեք ինձ  
գինը :

— Այդ հրդեհին դէպքը մենք  
չեմք իմացած . ինչպէս եղաւ այդ  
բանը :

— Խիստ սովորական կերպով . զա-  
մէնքն ալ մէկիկ մէկիկ ծխեցի : Ահա-  
ւասիկ իմ տան տիրոջա տուած վիայա-  
գիրը , և ուրիշ մի ալ զոր դրացւոյս  
մէկը տուած է և երկուքն ալ կը վր-  
կայեն իրին ձիշտ եղելութիւնը :

— Վարկայ կատակ է . . . Աննք  
չեմք վճարեր բնաւ :

— Կարեւորութիւն ունեցող գործ  
մի է և ոչ կատակ , և պէտք է օր հա-  
տուցանէք :

Այն պատմութեան մէջ զարմա-  
նալին այն է , օր քաղաքին դատաւորն  
ալ պայմանագրութե բնագրին կը-  
թընելով , և տեսնելով՝ օր մէկ կողմէն  
գործը չու բացուիր , հրդեհի գէմ ա-  
պահութեան գրուած ապրանքը .  
միւս կողմէն յիշեալ ապրանքն ալ ի-  
րօք այրած է , ուստի Բնկերութեան  
կը վճռէ օր հատուցանէ տու գանքը :

Հետեւեալ օրը Բնկերութեան  
կողմէն պատմական տակ անին դիմա-  
ցըն ելնելու կը կանչուի Ճէնտըլմէ-  
նը , ապահովնութիւն գիտմամք  
կրակ տալուն համար . և որովհետեւ  
հրդեհածիգ մարդիկ՝ օր իրենց կամօ-  
քը տեղ մի կրակ կը ձգեն՝ մահա-  
պարտ կը համարին ըստ օրինաց , ուս-  
տի ծազրածու Անդղեացին տեսնելով  
օր գործը ուրիշ կերպարանք առաւ ,  
իւր գէմքին վերայ ալ ծիծաղի նշան-  
ներ չմնար , և բարեբազդ կը համարի  
գինքը դատապատճին բոլոր ծափքը  
վճարելով մէկ զի քաշուիլը :